

**ԽՈՇՈՐ ՀՐԴԵՀԱՊԱՅԹՈՒՆԱՎՏԱՆԳ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՎԹԱՐԻ ԴԵՊՔՈՒՄ
ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԾԵԼՈՒ ՊԼԱՆ**

1.Իրավիճակի նկարագրություն

Խոշոր հրդեհապայթունավտանգ օբյեկտներում աղետներն ու վթարները հաճախ, որպես կանոն զուգորդվում են հրդեհներով: Այդպիսի հրդեհների դեմ պայքարելը շատ դժվար է, քանի որ դրանք ընթանում են ուժեղ թունավոր նյութերի այրմամբ՝ առաջացնելով վտանգավոր ծխածածկույթ: Պայթյունի և այրվող նյութի արտահոսքի պատճառով կրակը տարածվում է շատ արագ, վնասվում է հակահրդեհային ջրամատակարարումը, առաջանում են փլուզումներ:

Հրդեհապայթունավտանգ օբյեկտներում վթարի առաջացման պատճառ կարող է հանդիսանալ արտադրության տեխնոլոգիական պրոցեսի անակնկալ դադարը, ռեժիմի խախտումը, մեքենաների կամ սարքավորումների շարքից դուրս գալը: Արտադրական վթարը կարող է առաջացնել աղետային իրավիճակ մարդկանց վիրավորման, թունավորման կամ մահվան պատճառ հանդիսանալ: Ավելի հաճախ պայթյուն են ճնշման տակ գտնվող բալոնները, կաթսաները և սարքավորումները:

Վառելանյութի եւ այլ դյուրավառ նյութերի պահեստները մեծ պոտենցիալ վտանգավորություն են ներկայացնում իրենցից բնակչության եւ տարածքների համար, այդ վտանգը պայմանավորված է նրանով, որ հրդեհները նմանատիպ պահեստներում, ինչպես նաև լիցքավորման կայաններում հաճախ ուղեկցվում են պայթյուններով: Այդ տեսակի հրդեհներից բարձր ջերմաստիճանային գոտիներում՝ այրման հետ մեկտեղ տեղի է ունենում ածխաջրածնային վառելիքի ինտենսիվ գոլորշիացում ձեւավորվելով օդագոլորշային (օդագազային) ամպերի: Սովորաբար այն կոչվում է վառելիքաօդային խառնուրդ, որը բերում է արագ այրման, որն էլ ուղեկցվում է դետոնացիոն պայթյունով: Պայթյունները տեղի են ունենում հիմնականում սահմանափակված տարածքներում, օրինակ բավականաչափ բարձր ճնշման տակ գտնվող տանկերներում: Նշենք, որ հրդեհները նավթամթերքների տանկերներում ուղեկցվում է ոչ միայն պայթյունով, այլև նավթամթերքների արտազատումով դեպի դուրս արագ այրմամբ: Հիմնականում այս խմբի օբյեկտների վտանգավորությունը պայմանավորված է հենց հրդեհի բռնկման հավանականությամբ, որի պատճառով էլ դրանք կոչվում է հրդեհապայթունավտանգ:

Արտադրական վթարների տեսանկյունից հատուկ վտանգ են ներկայացնում ուժեղ ներգործող թունավոր նյութեր օգտագործող կազմակերպությունները , որտեղ պահպանման և տեղափոխման կանոնների խախտումը, անվտանգության կանոնների խախտումը հաճախ պատճառ են հանդիսանում աղետալի հետևանքների:

Մարզում խոշոր արտադրական վթարներ, պայթյուններ կամ հրդեհներ կարող են առաջանալ մի շարք օբյեկտներում, ինչպիսիք են «Կոտայք» գարեջրի գործարան ՄՊԸ-ն, «Թամարա» ՄՊԸ-ն, Հրագդանի «Լազուր» ՊՀ-ն, ՀՀ ԶՈՒ թիկունքի վարչության վառելիքի կենտրոնական բազան, խոշոր ավտոգազալցման կայանները և բենզալցակայանները:

Խոշոր հրդեհապայթունավտանգ օբյեկտներ են հանդիսանում այն օբյեկտները, որտեղ՝

1) Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատած սահմանաքանակները գերազանցող չափերով արտադրվում, վերամշակվում, պահվում, փոխադրվում, օգտագործվում կամ ստացվում են հետևյալ հատկանիշներով բնութագրվող վնասակար նյութերը՝

ա. դյուրավառ նյութեր, որոնք գազային վիճակում, նորմալ ճնշման պայմաններում օդի հետ խառնվելու դեպքում դառնում են բոցավառ, եւ որոնց եռման ջերմաստիճանը նորմալ ճնշման դեպքում 20°C, կամ դրանից ցածր է.

բ. օքսիդացող նյութեր, որոնք օժանդակում են այրմանը, հարուցում են կրակի առաջացում կամ նպաստում են այլ նյութերի բոցավառմանը օքսիդավերականգնման էկզոթերմիկ ռեակցիաների հետեւանքով.

գ.այրվող նյութեր՝ հեղուկներ, գազեր, փոշիներ, որոնք ունեն ինքնաբռնկվելու հատկություններ, ինչպես նաև կարող են բռնկվել կրակի աղբյուրից.

դ.պայթուցիկ նյութեր, որոնք որոշակի արտաքին ազդեցություններից ընդունակ են շատ արագ ենթարկվել ինքնատարածվող քիմիական վերափոխման՝ անջատելով ջերմություն եւ առաջացնելով գազեր.

ե.թունավոր նյութեր, որոնք ազդելով կենդանի օրգանիզմների վրա՝ կարող են դառնալ հիվանդության կամ մահվան պատճառ.

զ.շրջակա բնական միջավայրի համար վտանգ ներկայացնող նյութեր, որոնք ջրային միջավայրում ձեռք են բերում սուր թունավոր հատկություններ, մետաղների հալոյթներ կամ այդ հալոյթներից ձուլվածքներ

2)իրականացվում են լեռնահանքային, հորապայթեցման աշխատանքներ կամ աշխատանքներ՝ օգտակար հանածոների հանքահարստացման ուղղությամբ,

3)նավթամթերքների, հեղուկ գազի, բնական (սեղմված) գազի, հաստատուն եւ շարժական լցավորման կայաններ, գազագլանաանոթային սարքավորումներ, տեխնոլոգիական նպատակներով գազ օգտագործող օբյեկտներ, գազապահեստարաններ:

2.Եզրակացություն

Հրդեհապայթունավտանգ օբյեկտներն ըստ վտանգավորության աստիճանի դասակարգելու նպատակով իրականացվում է արտադրական վտանգավոր օբյեկտում տեխնաձին վթարի ռիսկի վերլուծություն եւ գնահատում: Ռիսկի վերլուծությունը եւ գնահատումը տեխնիկական անվտանգության ապահովման բաղադրիչներից են, որոնք ենթադրում են տեխնիկական տեղեկատվության ամբողջական օգտագործում՝ տեխնաձին վթարների կանխատեսման, վտանգավորության նույնականացման համար: Ռիսկի վերլուծությունը եւ գնահատումն իրականացվում են ըստ հետևյալ տարատեսակների՝

1) տեխնիկական ռիսկ, որի պատճառ կարող են հանդիսանալ տեխնիկական միջոցների անսարքությունը, կամ շեղումը տեխնիկական կանոնակարգի պահանջներից.

2) անհատական ռիսկ՝ առանձին անհատների կամ մարդկանց խմբի ոչ ճիշտ գործողությունները, ինչը կարող է հանգեցնել արտադրական վթարի.

3) տարածքային ռիսկ՝ հնարավոր վթարների ընդգրկման գոտին եւ տարածքային սահմանները.

4) սոցիալական ռիսկ՝ բնորոշում է հնարավոր վթարի մասշտաբները եւ հասցվող վնասի չափերը.

5) կոլեկտիվ ռիսկ՝ բնորոշում է վթարի հետեւանքով տուժվող մարդկանց քանակը.

6) սպասվելիք վնասի ռիսկ՝ բնորոշում է վթարի հետեւանքով առաջացող նյութական կորուստները.

7) այլ հնարավոր ռիսկեր:

Արտադրական վտանգավոր օբյեկտում վթարի ռիսկի աստիճանը եւ վտանգի մեծությունը գնահատվում են դրանց հավանականության, հաճախականության և հնարավոր հետեւանքների ծանրության վերլուծությամբ ու համադրմամբ:

Ռիսկի վերլուծության և գնահատման արդյունքները պետք է օգտագործվեն արտադրական վտանգավոր օբյեկտի շահագործման, անվտանգության փորձաքննության իրականացման, օբյեկտի ապահովագրման, տնտեսական եւ բնապահպանական գործոնների ներագրեցության բացահայտման գործընթացների ժամանակ:

Մարզի հրդեհապայթունավտանգ օբյեկտները

Հ/Հ	Հրդեհապայթունավտանգ օբյեկտի անվանումը	Գտնվելու վայրը	Նշումներ
1	<<Կոտայք >> գարեջրի գործարան ՍՊԸ	Ք.Աբովյան	
2	<<Թամարա >> ՍՊԸ	Ք.Աբովյան	
3	Հրագրանի <<Լագուր >> ՊՀ	Ք.Հրագրան	
4	ՀՀ ԶՈՒ թիկունքի վարչության վառելիքի կենտրոնական բազա	Գ.Բալահովիտ	

Բենզալցակայաններ		
5	<<Միկա>> ՍՊԸ բենզաբազա	ք.Հրազդան գործարանային,Շահումյան-4Ա
6	<<GPS>> ՍՊԸ բենզաբազա	ք.Հրազդան Վանատուր թաղ.
7	<<Ֆլեշ>> ՍՊԸ բենզալցակայան	. ք.Հրազդան Անդրանիկի պողոտա
8	ԱԶ Արշավիր բենզալցակայան	ք. Հրազդան Անդրանիկի պողոտա
9	<<Միկա>> ՍՊԸ բենզալցակայան	ք. Հրազդան Անդրանիկի պողոտա
10	ԱԶ Երիցյան	ք. Չարենցավան
11	ԱԶ Մովսիսյան	ք. Չարենցավան Շահումյան փ.
12	ԱԶ Ոսկանյան	ք. Չարենցավան Շահումյան փ
13	ԱԶ Աֆյան	ք. Չարենցավան Շահումյան փ
14	Թիվ 22 բենզալցակայան	ք.Եղվարդ
15	ԱԶ Մարատ	ք.Արմավիր Տոռոզյան
16	ԱԶ Թովմասյան	գ.Զորավան
17	ԱԶ Հարությունյան	գ.Նոր Գեղի
18	<<ՍՊԸ>> 700	ք. Արմավիր Երևանյան փ.
19	<<Էլիզ>>ՍՊԸ	ք. Արմավիր,Օղակաձև խաչմերուկ
20	<<Մանսարո>>	ք. Արմավիր Արզնու խճուղի
21	<<Սարամի>> ՍՊԸ	ք. Արմավիր
Գազալցակայաններ		
22	<<Բագրաֆ>> ՍՊԸ	ք. Հրազդան Շահումյան 4 ա
23	<<Հրակնատ>> ՍՊԸ	ք.Հրազդան Ծաղկաձորի խաչմերուկ
24	<<Վաղարշ>> ՍՊԸ	ք.Հրազդան Ֆիդ.փող.խաչմերուկի տարածք
25	<<Բիլլմար>> ՍՊԸ	ք. Հրազդան Շահումյան փողոց
26	<<Արա և Այծեմնիկ>> ՍՊԸ	ք.Հրազդան Անդրանիկի պողոտա
27	<<ԱԳԼՃԿ>> ՍՊԸ	գ.Աղավնաձոր
28	<<Արմինե>> Ա կոռպ	ք.Չարենցավան Շահումյան փող.
29	<<Կարկոր>> ՍՊԸ	ք.Չարենցավան Գանգրահեր տղա 1
30	<<Աշնաղ>> ՍՊԸ	Կոտայքի մարզ գ.Արզական
31	<<Նարեկ-Համբարձում>> ՍՊԸ	ք.Եղվարդ Երևանյան խճուղի 1
32	<<Վեագազ>> ՍՊԸ	ք.Եղվարդ

33	<<Ավտոգազ>> ՍՊԸ	գ.Զրվեժ	
34	<<ԿՀԱՌ>> ՍՊԸ	Երևան-Սևան մայրուղի 43 կմ	
35	<<Ավտոգազ>> ՍՊԸ	գ.Բալահովիտ	
36	<<Ռ.Մելքոնյան և ընկերներ>>	գ.Արզնի	
37	ԱԶ և Պողոսյան,	գ.Արզնի	
38	ԱԶ Արտաշես Մկրտչյան,	գ.Գառնի	
39	<<Ալգազ>> ՍՊԸ,	գ.Պռոշյան	
40	<<ՄՄ և ՄՍ>> ՍՊԸ,	գ.Զովունի	
41	ԱԶ և Թևոսյան,	գ.Նոր Գեղի	
42	<<Սամսոն Սամսոնյան>> ՍՊԸ		

3. Ազդարարում

ՀՀ Կոտայքի մարզի տարածքում խոշոր հրդեհապայթուցանավտանգ օբյեկտի վթարի առաջացման դեպքում բնակչության պաշտպանության միջոցառումները կազմակերպում է մարզպետը՝ ԿՄՓՎ ստորաբաժանումների ուժերով, ընդգրկելով մարզի բնակչության պաշտպանության տարածքային և ծառայությունների ուժերն ու միջոցները: Կախված ստեղծված իրավիճակից և աղետի գոտու ծավալից գործում է մարզի **արտակարգ իրավիճակների հետևանքների վերացման հանձնաժողովը** (ԱԻԳՀ):

Կոտայքի մարզի արտակարգ իրավիճակների հանձնաժողովը հանդիսանում է մշտապես գործող, արտակարգ իրավիճակներում բնակչության և տարածաշրջանի պաշտպանության խնդիրների լուծմամբ զբաղվող մարմին:

ԱԻԳՀ-ն ապահովում է մարզի համայնքների բնակչության և օբյեկտների պաշտպանության համակարգի կայունությունը, կառավարման կառուցվածքի կատարելագործումը, խոշոր վթարների և արտակարգ իրավիճակների կանխարգելմանն ու հետևանքների վերացմանն ուղղված ուժերի և միջոցների պատրաստակաությունը, ինչպես նաև գնահատում է այդ հետևանքների պատճառած վնասի չափը:

Արտակարգ իրավիճակների հանձնաժողովի նախագահն ի պաշտոնե հանդիսանում է Կոտայքի մարզպետը, իսկ տեղակալներ՝ մարզպետի տեղակալն ու մարզային փրկարարական վարչության պետը:

1) Խոշոր հրդեհապայթուցանավտանգ օբյեկտներին սպառնացող կամ նրանցում առաջացած վթարների դեպքում բնակչության ազդարարումը կատարվում է կապի հանգույցի օբյեկտի հերթապահ դիսպետչերի միջոցով:

2) Մարզպետի կարգադրությամբ հրդեհապայթուցանավտանգ գոտում իրականացվում է բնակչության իրազեկում ՋԼՄ-ների, կապի և ազդարարման տարբեր միջոցներով, օգտագործելով նաև հասարակական կարգի պահպանության ծառայության բարձրախոսներով կահավորված տրանսպորտային միջոցները, գործի է դրվում շրջակայքում ապրող բնակչության ազդարարման տեղային համակարգը, իրողությունը ռադիոցանցով հաղորդվում է բնակչությանը:

3) Հրդեհապայթուցանավտանգ օբյեկտի աշխատակազմին և մոտակա ապրող բնակչությանը ազդարարվում է տեղական համակարգի միջոցով:

4) Ազդարարման ազդանշանները տրվում են անընդհատ, երկարատև (3 րոպե տևողությամբ) ձայնային ազդանշան: Միաժամանակ ազդարարման միջոցներով 2-3 րոպե

տևողությամբ տրվում է հետևյալ բովանդակությամբ համապատասխան տեքստային հաղորդագրություն. «Ուշադրություն, ուշադրություն...»: Անհրաժեշտության դեպքում հաղորդագրությունը լրացվում է «Վտանգ է սպառնում հետևյալ բնակավայրերին ... » բառերով:

5) Հրդեհապայթյունավտանգ օբյեկտի վթարային գոտում գործելակերպի կանոնների մասին տեղեկատվությունը բնակչությանը հասցվում է հեռուստատեսության, ռադիոյի և շարժական բարձրախոս սարքավորումների միջոցով: Բոլոր հավանական կանխատեսվող վթարների դեպքի համար տվյալ համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարությունը ՄՓ վարչության հետ համատեղ նախօրոք պատրաստում է հաղորդագրության տարբերակները՝ համապատասխան յուրահատուկ պայմանների համար:

6) ՄՓՎ-ի հերթապահը ազդարարում է բնակչությանը հնարավոր վթարի հետագա զարգացման, տարածման ուղղության վերաբերյալ և ցուցումներ տալիս դրսում գտնվող բնակչությանը շտապ կերպով լքել հրդեհապայթյունավտանգ տարածքը:

7) Բնակչությանը տրվում է մոտավորապես հետևյալ տիպի տեղեկություններ. «Ուշադրություն: Խոսում է Կոտայքի մարզային փրկարարական վարչության շտաբը: Քաղաքացիներ, հրդեհապայթյունավտանգ օբյեկտում տեղի է ունեցել վթար՝ (այս ինչ) նյութի պայթյուն հրդեհի ուղեկցմամբ և արտահոսքով, դրա մասին տեղեկացնել հարևաններին, հետագայում հետևել մեր հրահանգներին: Այսպիսի տեղեկատվությունը, որը անհրաժեշտ է կրկնել մի քանի անգամ, նախատեսվում է մոտավորապես 5 րոպեի համար:

8) Լսելով շշակների ձայնը, անհրաժեշտ է անմիջապես միացնել հեռուստացույցը, ռադիո-ընդունիչը և լսել տեղական կառավարման մարմինների կամ մարզային փրկարարական ծառայության հաղորդումներն ու հայտարարությունները: Վթարի վերացման ամբողջ ժամանակաշրջանում բոլոր այդ միջոցները անհրաժեշտ պահել միացրած վիճակում: Տեղական ռադիոհեռուստատեսության հաղորդակցական կայանները անցնում են շուրջօրյա աշխատանքային ռեժիմ

4. Բնակչության պաշտպանության միջոցառումների կազմակերպում և իրականացում (պատասպարում կամ տարահանում)

Բնակչության տարահանման միջոցառումների ապահովումը

Տարահանումն իրականացվում է խոշոր հրդեհապայթյունավտանգ օբյեկտների առաջացման կամ անմիջական սպառնալիքի դեպքում, որի հետևանքով որոշակի տարածքներում (բնակավայրերում, օբյեկտներում) կարող են առաջանալ մարդկանց կյանքի և կենսագործունեության բնականոն պայմանների վրա բացասաբար ազդող գործոններ: Այն կարող է իրականացվել 2 փուլով: Առաջին փուլում բնակչության տարահանում՝ հրդեհապայթյունավտանգ գոտիներից անվտանգ տարածքներ՝ ժամանակավոր տեղակայման կետեր: Ժամանակավոր տեղակայման կետերի համար կարող են օգտագործվել կինոթատրոնները, ակումբները, ուսումնական հաստատությունները, հյուրանոցները, հանրակացարանները, վրանային ավանները և այլն: Երկրորդ փուլում տևական բնույթի իրավիճակներում կամ մշտական բնակության վայր վերադառնալու անհնարինության դեպքում իրականացվում է բնակչության տեղափոխում ժամանակավոր տեղակայման կետերից երկարատև բնակության կետեր, որտեղ հնարավոր է բնակության երկարատև և համակողմանի կենսագործունեության ապահովումը: Երկարատև բնակության կետերի համար կարող են օգտագործվել առողջարանները, նախաբուժարանները, հանգստյան տները, պանսիոնատները, տուրիստական բազաները, հյուրանոցները և այլ շինություններ (անկախ սեփականության ձևից), որոնք համապատասխանում են երկարատև բնակության պայմաններին: Ժամանակավոր տեղակայման կետերը և երկարատև բնակության կետերն ընտրվում են նախօրոք՝ ելնելով առաջացող հնարավոր իրավիճակներից:

1) Վտանգավոր և առավել վտանգավոր հրդեհապայթյունավտանգ գոտի ընկած աշխատողները և բնակչությունը տարահանվում են ոչ հրդեհապայթյունավտանգ շրջաններ, կամ պաշտպանական կառույցներ:

2) Մասնակի կամ լրիվ դադարեցվում է այն հիմնարկ-ձեռնարկությունների աշխատանքները, որոնք գտնվում են հավանական վտանգավոր գոտիներում:

4) Բնակչությանը ԱՊՄ-ով ապահովումը իրականացվում է համաձայն ՀՀ կառավարության 25.10.2000թ. թիվ 679 որոշման պահանջների:

5) Անհատական պաշտպանության միջոցների բաշխումը կատարվում է աշխատանքային վայրերում նախօրոք սարքավորված բաշխման կետերում և պաշտպանական կառույցներում:

6) Զտող հակագազերով և անհատական պաշտպանության, բժշկական միջոցներով առաջին հերթին ապահովվում են կազմավորումների անձնակազմերը, հակագազերի չբավարարող քանակությունը ապահովվում է պահեստային գույքի հաշվին:

7) Մարզի բնակչությանը անհատական պաշտպանության միջոցներով (ԱՊՄ) ապահովումը կատարվում է համայնքների և կազմակերպությունների միջոցով, նախապես կազմված հաշվարկների հիման վրա: Համայնքներում և կազմակերպություններում ծավալվում են անհատական պաշտպանության միջոցների բաշխման կետեր:

5. Կանխարգելիչ միջոցառումներ

Հրդեհապայթունավտանգ օբյեկտների վթարից պաշտպանության նախապատրաստման կազմակերպչական և ինժեներատեխնիկական միջոցառումներն իրենց մեջ ընդգրկում են համընդհանուր միջոցառումներ, որոնք անց են կացվում օբյեկտներում վթարներից նախագգուշացման և նրանց հետևանքների վերացման համար մշտապես պատրաստ լինելու ուղղությամբ, դրանցից են՝

1) Հրդեհապայթունավտանգ օբյեկտների անձնակազմի և շրջակայքում ապրող բնակչությանը ազդարարելու և ընդունված ազդանշանները նրանց հասցնելու համար կազմակերպել և մշտական պատրաստ վիճակի մեջ պահել ազդարարման համակարգը:

2) Անհատական պաշտպանական միջոցների կուտակում (արդյունաբերական, քաղաքացիական և մեկուսացնող հակագազեր, մաշկի պաշտպանության միջոցներ) անձնակազմի համար: Կազմակերպել անհատական պաշտպանության միջոցների պահպանումը մշտական պատրաստ վիճակում:

3) Ինժեներատեխնիկական միջոցառումներ.

ա. Հրդեհապայթունավտանգ նյութերով լցված տարողությունները, հաղորդակցման ուղիները և արտադրական սարքավորումները կահավորել ավտոմատ և ձեռքի միջոցով աշխատող սարքերով (անջատող հավելյալ ճնշման փականներ, ջերմակարգավորիչներ և այլն), որոնք կանխում են հրդեհապայթունավտանգ նյութերի արտահոսքը վթարների դեպքում:

բ. Հիմնարկության աշխատանքային սենյակները կահավորել վթարային ազդանշանային միջոցներով:

գ. Էլ. էներգիայի անջատման, տրանսպորտավորող սարքավորումների, ագրեգատների, ապարատների և այլնի կանգնեցման անհրաժեշտության և հերթականության նախատեսում:

4) Օբյեկտներում վթարների կանխարգելման և անհետաձգելի փրկարարական աշխատանքների անցկացման համար նախատեսված են անվտանգության հետևյալ կազմակերպչական միջոցները.

ա. մարդկանց վտանգավոր տեղանքից դուրս բերելու և նախագգուշական միջոցառումների անցկացման համար պատասխանատու տեխանձնակազմի հստակ գործողություններ,

բ. գազափրկիչ ծառայության կողմից գազայնացված տարածքում վթարի հետևանքով փակուղում հայտնված մարդկանց դուրս բերում,

գ. մարդկանց բարեհաջող դուրս բերումն ապահով տարածք, օդափոխիչների նորմալ աշխատանքի ապահովում (օրինակ օդաքաշ օդափոխիչի գործարկում),

դ. անվտանգ տեղամասերի մատույցներում պահակակետերի տեղակայում (գազափրկիչ ծառայության և կամավոր խմբի անդամներից կամ ձեռնարկության պահակներից) վթարների վերացմանը մասնակցելու համար դեպի գազայնացված տեղամաս կամ վտանգավոր գոտի գնացողների անցագրերի ստուգման համար,

ե. վթարային շինություններից ավելի անվտանգ և կարճ ճանապարհով մարդկանց դուրս բերելու նախատեսում,

գ. պետք է ցույց տրվեն մարդկանց յուրաքանչյուր աշխատատեղից, շենքից դուրս գալու ուղիները՝ ցանկացած վթարի դեպքում,

է. գազի պայթման, շինության գազայնոտվածության և հրդեհի դեպքում պետք է նախատեսվի շենքից մարդկանց անվտանգ դուրս բերումը,

թ. ցանկացած վթարի դեպքում՝ անկախ դրա չափից և տեսակից, անմիջապես կանչել գազափրկիչ ծառայության աշխատակիցներին՝ վթարները վերացնելու և օգնություն ցույց տալու այն մարդկանց, ովքեր աշխատում են գազային մթնոլորտում վթարների վերացման համար:

6. Հրդեհաշիջման կազմակերպում

Հրդեհի օջախում աշխատանքներ տանելու համար հակահրդեհային ստորաբաժանումների և կազմավորումների հիմնական խնդիրներն են: Հրդեհի շրջափակումը ու մարումն, օգնության կարիք զգացող մարդկանց միաժամանակյա փրկումը: Անհրաժեշտության դեպքում ներգրավված կառուցվածքային ստորաբաժանումների օբյեկտային և տարածքային տարբեր նշանակության կազմավորումները հիմնականում օգտագործվում են կայծերից հրդեհների ծագումը կանխելու, մեծ տարածության վրա փողրակային գծեր անցկացնելու, կոնստրուկցիաներ քանդելու հակահրդեհային անջրպետներ ստեղծելու ջրի աղբյուրների մատուցները և անցատեղերը հրշեջ տեխնիկայի համար մաքրելու նպատակով:

Մարդկանց փրկումը և տարահանումը որպես կանոն իրականացնում է հրշեջ ուժերի և միջոցների ծավալման հետ միաժամանակ: Եթե մարդկանց փրկելու և հրդեհի մարելու համար ուժերն ու միջոցները չեն բավականացնում, իսկ մարդկանց անմիջական վտանգ է սպառնում, ապա առաջին հերթին կատարում են փրկարար աշխատանքներ, իսկ հետո շարունակում հրդեհաշիջում: Հրդեհի ժամանակ մարդկանց փրկելիս և տարահանելիս օգտագործում են հիմնական և լրացուցիչ մուտքերն ու ելքերը, մշտական ու շարժական հրշեջ սանդուղքները, ավտոբեռնիչները և այլ հարմարանքներ: Մի շարք դեպքերում մարդկանց փրկելու համար միջնապատերի և պատերի մեջ բացում են հատուկ խորշեր:

Մարզում հակահրդեհային ապահովումն իրականացվում է Կոտայքի մարզային փրկարարական հրշեջ փրկարարական ջոկատները:

Հակահրդեհային ապահովման ուժերն ու միջոցները

Հ/հ	Ստորաբաժանման անվանումը	Սպասարկող տարածա շրջանը	Ուժերն ու միջոցները		Ծանոթություն
			անձնակազմ	տեխնիկա	
1.	Հրագղանի ՀՓՁ	2 քաղաքային, 9 գյուղական համայնքներ	44	3	
2.	Աբովյանի ՀՓՁ	3 քաղաքային, 31 գյուղական համայնքներ	35	3	
3.	Եղվարդի ՀՓՁ	1 քաղաքային, 8 գյուղական համայնքներ	35	2	
4.	Չարեցաբանի ՀՓՁ	1 քաղաքային, 7 գյուղական համայնքներ	31	2	
5.	ՀրագՋԷԿ-ի պահպանության ՀՀՁ	-	47	4	
Ընդամենը		62 համայնք	192	14	

Ծանոթություն. Եղվարդի տարածաշրջանի Զովունի, Քանաքեռավան, Պոռոշյան և Քասախ համայնքների սպասարկումը իրականացվում է Երևանի ՀՓՁ-ների կողմից, իսկ Նոր Երզնկա նամայնքի սպասարկումը՝ Աշտարակի ՀՓՁ-ի կողմից:

7.Փրկարարական աշխատանքների կազմակերպում

Փրկարարական աշխատանքները կանոնակարգելու նպատակով ստեղծվում են աշխատանքային տեղամասեր, որտեղ փրկարարական աշխատանքների անընդհատությունը ապահովելու նպատակով մարզպետի որոշմամբ սահմանվում են աշխատանքային երկու և ավելի հերթափոխեր՝ կախված ստեղծված իրավիճակից:

Փրկարարական աշխատանքները ներառում են՝

- 1) աշխատանքային տեղամասերի և երթուղիների ընդհանուր և հատուկ հետախուզություն.
- 2) հրդեհների մեկուսացում և մարում.
- 3) տուժածների որոնում և դուրս բերում վտանգավոր տարածքներից.
- 4) տուժածներին բժշկական օգնության ցուցաբերում և բժշկական հաստատություններ տեղափոխում.
- 5) վտանգավոր տարածքներից բնակչության տարահանում:
Անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքները ներառում են՝
- 6) ճանապարհների և կամուրջների մաքրում (վերականգնում).
- 7) կոմունալ-էներգետիկ և կապի ցանցերում վթարների վերացում ու գործունեության վերականգնում.
- 8) փլուզմամբ սպառնացող կոնստրուկցիաների (շինությունների) ամրացում կամ փլեցում.
- 9) պաշտպանության, տնտեսության համար կարևոր նշանակություն ունեցող, ինչպես նաև բարձր վտանգավորություն ներկայացնող կազմակերպությունների գործունեության վերականգնում.
- 10) փլուզումներում երթուղիների ստեղծում.
- 11) հասարակական կարգի ապահովում:

Բնակելի հատվածներում փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներ իրականացնելիս հատուկ ուշադրություն է դարձվում փլված շինություններում տուժածների որոնմանը և բուժօգնության ցուցաբերմանը: Այս աշխատանքներին ներգավվում են ձեռքի գործիքներով և մեխանիզացիայով հագեցված ստորաբաժանումները:

Կազմակերպություններում, խոշոր փլվածքների առկայության դեպքում փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների անցկացմանը և կառույցների մուտքերի մաքրման աշխատանքներին ներգրավվում են մեխանիզացված և ինժեներական կազմավորումները:

Երթուղային ճանապարհների մաքրման, դրանց վրա հրդեհների մարումը և ճանապարհային կոմունիկացիաների վերականգնումն իրականացնում են ճանապարհների անցողականության ապահովման խմբերը:

Ճանապարհների երթևեկության վերականգնումից հետո իրականացնում են ճանապարհների մաքրում դեպի աշխատանքային տեղամասեր:

Ճանապարհների մաքրման և վերականգնման, հրդեհների մեկուսացմանն ու մարմանը զուգահեռ իրականացվում են կոմունալ-էներգետիկ ցանցերի և կազմակերպությունների վթարների վերացման աշխատանքներ:

Փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների իրականացման հերթականությունը, ձևերը և կատարման կարգը կախված են փլվածքների բնույթից, վթարների տեսակից, երկրորդային վտանգ ներկայացնող գործոններից:

Գիշերային ժամերին ապահովվում է փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների աշխատանքային տեղամասերի և երթուղիների լուսավորումը: Զուգահեռ կազմակերպում է պարեկային ծառայություն:

8.Փոխգործողություններ

Փրկարարական աշխատանքների իրականացման գործընթացում փոխգործողությունները կազմակերպվում են արտակարգ իրավիճակներում արագ արձագանքման ուժերի նպատակաուղղված օգտագործման և այդ ուժերի միջև գործողությունների հստակեցման նպատակով: Փոխգործողությունները կազմակերպվում և իրականացվում են ըստ վայրի և ժամանակի, փոխգործողությունների հիմքն են հանդիսանում համապատասխան պլանները:

Փոխգործողությունը կազմակերպվում է առաջին հերթին հիմնական խնդիրները (փրկարարական և արտակարգ իրավիճակի տեղայնացման աշխատանքներ) իրագործող կազմավորումների շահերից ելնելով:

Փոխգործողություններ կազմակերպելիս համաձայնեցվում է՝

- 1) տարածք (օբյեկտ) մուտք գործելու ժամանակ գործողությունների կարգը,
- 2) փրկարարական աշխատանքների իրականացմանը խանգարող հանգամանքների, խոչընդոտների վերացման կարգը,
- 3) տեղեկատվության փոխանակումը միմյանց միջև,
- 4) իրադրության բարդ պայմաններում փրկարարների գործելու կարգը,
- 5) կոմունալ-էներգետիկ համակարգի վթարների վերացման ժամանակ փրկարարների և տեղական կազմավորումների մասնագետների հետ փոխգործողության կարգը,
- 6) հերթափոխման ժամանակ գործողությունների կարգը,
- 7) իրավիճակի կտրուկ փոփոխության, փրկարարի կյանքին անմիջական վտանգի դեպքում գործողության կարգը,
- 8) կապի և տեղեկատվության կարգը,
- 9) կառավարման կետերի տեղակայման վայրերը:

Ելնելով ստեղծված իրավիճակից առավել վնասված կազմակերպություններում փոխգործողության կարգով կարող են միմյանց տրամադրել փրկարարական և այլ կազմավորումներ՝ ուժեր ու միջոցներ:

Փրկարարական և այլ անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներում փոխգործողության կարգով կարող են ընդգրկվել նաև մարզի ու հարակից տարածքի հասարակական փրկարարական ջոկատների և կամավորական միությունների անձնակազմերը: Առկա ուժերի ու միջոցների անբավարարության դեպքում մարզպետի հայտով ՓԾ տնօրենի որոշմամբ փրկարարական և այլ անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներում կարող են ընդգրկվել նաև ՓԾ փրկարարական ստորաբաժանումները:

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՓՐԿԱՐԱՐԱԿԱՄՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

Փ/Ծ ՓՈՒԳՆԴԱՊԵՏ

Գ.ԳՐԻԳՈՐՅԱՆ